

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի № 1293-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» _____ 2022 թվականի № _____ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի № 1293-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո**
2 ու մ է.

1. *Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում
ավտոկայանատեղի կազմակերպման կարգը սահմանելու
մասին» №1293-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ
փոփոխությունը և լրացումները՝*
 - *որոշման հավելվածի 1-ին կետում «փողոցներում» բառից հետո «և»
բառը փոխարինել ստորակետով, իսկ «հրապարակներում» բառից
հետո լրացնել «և այլ տարածքներում» բառերը.*
 - *որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը փակագծերից հետո
լրացնել «կամ փակ տարածք» բառերով:*

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

Ն.Փաշինյան

